

Թիւ 27260
Մարտ 25, 1981

Մեծայարգ
Տիար Ժիրայր Պապիկեան
Մասսաչուսէց.

Յարգելի Տիար Պապիկեան,

Ժամանակին ստացած ենք Փետրուար 25, 1981 թուակիր ձեր նամակը, որմէ ետք՝ 5,277.42 տոլարի փոխգիրը:

Ձեր փափաքին համաձայն վերոյիշեալ գումարին 2,500 տոլարը փոխանցուեցաւ Առաջնորդարանի Կոմիտաս Երգչախումբին եւ 1,856 տոլարը յատկացուեցաւ Հայր Խաժակի ուսման եւ անձնական ծախսերուն: Իսկ մնացեալ 921.42 տոլարը քանի մը շաբաթէն դարձեալ պիտի դրկուի Հայր Խաժակին՝ երբ իրմէ ստանանք դպրոցական հաշուեկշիռը:

Այս առթիւ կը փափաքինք մեր գնահատանքն ու շնորհակալութիւնը յայտնել ձեզի՝ ձեր այս ազնիւ եւ օգտակար մտածումին եւ կատարած յատկացումին համար:

Կ'աղօթենք որ Տէրը ձեզի եւ ձեր հարազատներուն պարգեւէ առաւել քաջատղջութիւն, յաջողութիւն եւ երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ